

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԻ

Հայ Եկեղեցու սրբազան առաքելության առավել ծաղկման, ինչպես նաև ներքին միասնականության առավել ամրապնդման առաջադրանքով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի բարձր փնօրինությամբ, 2005 թվականի մարտի 4-5-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում փեղի ունեցավ Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պատվիրակությունների խորհրդակցական ժողով, որի նպատակն էր «Հայ Եկեղեցու Վերանորոգության հրամայականը» թեմայով օրակարգի նախագծի պատրաստությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսության պատվիրակության անդամներն էին.

Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամյան (Արեւնապետ).

Գերշ. Տ. Միքայել եպս. Աջապահյան (Արեւնապետ).

Տիար Ռաֆայել Պապայան.

Տիար Զեյնա Գալուստյան:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պատվիրակության անդամներն էին.

Գերշ. Տ. Օշական արքեպս. Չոլոյան (Արեւնապետ).

Գերշ. Տ. Նարեկ եպս. Ալեմեզյան (Արեւնապետ).

Տիար Երվանդ Փամբուկյան.

Տիար Արսեն Դանիելյան:

Արժ. Տ. Վահրամ քահանա Մելիքյանը պատրաստեց ժողովի արեւնագրությունը:

Ուրբաթ օրը, մարտի 4-ին, երկու պատվիրակություններին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետն իր հայրական օրհնությունը փոխարինեց պատվիրակությունների անդամներին և խոսեց Արամ Ա Վեհափառ Հայրապետի և իր ակնկալությունների մասին: Ապա Տ. Օշական արքեպիսկոպոս Չոլոյանը Նորին Սրբությանը փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի սիրո ջերմ ողջույնները և հայտնեց ներկաների որդիական հարգանքը:

Տերունական աղոթքով գոհություն և փառք վերառաքելով առ Աստված համախմբման համար և ներշնչվելով աստվածաշնչական ընթերցմամբ (Ա Կորնթ. ԺԲ 12-26)՝ ժողովականներն սկսեցին իրենց աշխատանքը, որի ինը խմբավորումներից բաղկացած օրակարգն ընդգրկում է Հայ Եկեղեցու ինքնությանը, կյանքին ու վկայությանն առնչվող հիմնական ոլորտները:



1. Հայ Եկեղեցու կանոնական վիճակը, եկեղեցաբանական, վարչական և կանոնադրային սահմանում.
2. Զրիստոնեական և հայեցի դաստիարակություն, ավերարանջական առաքելություն և հոգևոր ու մշակութային արժեքների կենսունակ պահպանություն.
3. Ծիսական և արարողական կյանք.
4. Հոգևորականների պարարտություն և վանական կյանքի վերաշխուժացում.
5. Միջեկեղեցական և միջկրոնական հարաբերություններ.
6. Դիրքորոշումներ արդի ընկերային և բարոյական փոփոխությունների հանդեպ.
7. Եկեղեցի և պետություն ու Եկեղեցի և ընկերային կառույցներ փոխհարաբերություններ.
8. Հայ ժողովրդի իրավունքների հեղափոխում.
9. Տեխնոլոգիական արդի միջոցների օգտագործում:

Այս հարցերի յուրաքանչյուր խումբ բնական առանձնաբար, որպես նախաքայլ հեղափոխական համապարփակ վերլուծության և համապարասխան քայլերի որոնգործման:

Ժողովի աշխատանքներն ընթացան ջրիստոնեական սիրո և հոգեկան բավարարության ջերմ մթնոլորտում՝ միշտ ելնելով Հայ Եկեղեցու հայրենի և սփյուռքյան բազմաշերտ առաքելությունն աշխույժ կենսավորմամբ իրագործելու հանձնառությունից:

Ժողովի ավարտին որոշվեց այս նախագիծը ներկայացնել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց և Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Վեհափառ Հայրապետներին առ ի նկատառություն՝ որդիաբար խնդրամատույց լինելով հանձնախմբային գործընթացի նախաձեռնությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ